

ՀՏԴ 352

«ՏՈՒՐՔ ԵՎ ՎՃԱՐ» ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՏԵԳՈՐԻԱՆԵՐԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ՝ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՕՐԻՆԱԿՈՎ

ԽՈՍՐՈՎ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա

Հոդվածում անդրադառնալով տեղական բյուջեի եկամտային մասում ոչ հարկային եկամուտների շարքում տուրքերի և վճարների ներառման խնդրին, վեր է հանվում տնտեսագիտական այդ կատեգորիաների հայեցակարգային բովանդակությունը և այդ լույսի ներքո վերլուծվում է «Պետական տուրքի մասին» և «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ գործող օրենքներում ամրագրված սահմանումները և որոշ դրույթները՝ ցույց տալով վերջիններիս հակասությունն այդ կատեգորիաների տնտեսագիտական բովանդակությանը: Հայեցակարգային մեկնաբանությունները հիմնավորվում են կոնկրետ օրինակներով թե՛ պետական և թե՛ տեղական իշխանության մարմինների իրավասությանը վերապահված ոլորտներից:

Հոդվածում վերլուծությունները բացահայտում են նաև տուրքերի և վճարների, որպես պետական և տեղական իշխանության մարմինների (այսուհետև՝ ՏԻ մարմիններ) կողմից նպատակադրված տնտեսական քաղաքականության ապահովման յուրահատուկ գործիքների, առանձնահատկությունները: Այդ համատեքստում անդրադարձ է կատարված նաև տեղական բյուջեների մշակման և համայնքների ֆինանսական ու տնտեսական հնարավորությունների արդյունավետության որոշ խնդիրներին:

Բանալի բառեր. տուրք, վճար, ՏԻ մարմիններ, իշխանություն, իրավասություն, բյուջե, եկամուտներ:

Համայնքի վարչական բյուջեն նախատեսված է համայնքի պարտադիր խնդիրները լուծելու համար անհրաժեշտ ընթացիկ կամ պահպանման ծախսերը հոգալու համար [3], այսինքն՝ համայնքային իշխանությունների պարտադիր լիազորությունները կատարելու համար անհրաժեշտ ընթացիկ կամ պահպանման ծախսերի ֆինանսավորման համար:

Ակնհայտ է, որ բյուջեի եկամուտների ծավալները պետք է լինեն բավարար՝ ՏԻ մարմինների կողմից իրենց պարտադիր լիազորությունների ընթացիկ ծախսերն ամբողջությամբ ֆինանսավորելու համար, քանի որ հակառակ պարագայում հանրային կյանքի ընթացքը համայնքում կշեղվի իր բնականոն հունից:

Այդ նպատակով օրենքը [2] վարչական բյուջեի եկամտային մասում ի թիվս այլ եկամուտների նախատեսում է նաև ոչ հարկային եկամուտներ:

Վարչական բյուջե մուտքագրվող ոչ հարկային եկամուտներն են՝

ա) պետական տուրքի որոշ տեսակները՝ համայնքի վարչական սահմաններում գործող նոտարներին օրենքով վերապահված իրավասությունից օգտվելու և քաղաքացիական կացության գրանցման կառույցներին օրենքով վերապահված իրավասությունից օգտվելու համար վճարվող պետական տուրքը, ինչպես նաև տվյալ համայնքում հաշվառված շարժական, գույքի գրանցման համար վճարվող պետական տուրքը

բ) տեղական տուրքեր,

գ) տեղական վճարներ:

Նշված ոչ հարկային եկամուտների տեսակների որոշման և դրանց արդարացի դրույքաչափերի սահմանման համար առանձնահատուկ կարևորություն ունի «տուրք» և «վճար» հասկացությունների սահմանումը:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով [4] պետական տուրքը սահմանվում է որպես պետական մարմինների կողմից օրենքով իրենց վերապահված լիազորությունների իրականացմամբ պայմանավորված գործողությունների կամ ծառայությունների դիմաց ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կողմից վճարվող պարտադիր վճար: Այսինքն՝ ըստ օրենքի սահմանման, պետական տուրքը վճար է, որը պարտադիր կարգով մուծում են իրավաբանական կամ ֆիզիկական անձինք պետական մարմինների գործողություններից կամ ծառայություններից օգտվելու դիմաց:

Պետական տուրքի մասին օրենքով [4] սահմանված են պետական տուրքի թվով 15 օբյեկտներ, ըստ էության, գործողությունների կամ ծառայությունների տեսակներ, որոնցից օգտվելն առաջացնում է պարտադիր վճար մուծելու պարտադրանք:

«Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքով [5] տեղական տուրքը սահմանվում է որպես ՏԻ մարմինների կողմից իրենց սեփական լիազորությունների իրականացմամբ պայմանավորված օրենքով սահմանված գործողությունների համար պարտադիր գանձույթ:

Նույն օրենքում [5] սահմանված են տեղական տուրքի թվով 22 տեսակներ և դրանք բոլորն, առանց բացառության, սահմանված են ՏԻ մարմինների կողմից համայնքի վարչական սահմաններում իրավաբանական կամ ֆիզիկական անձանց որոշակի գործունեություն իրականացնելու թույլտվություն տալու համար (շինարարություն իրականացնելու, տեխնիկական հեղուկ կամ ծխախոտ և ալկոհոլ վաճառելու, գազալցակայանի կամ հեղուկ վառելիքի լցակայանի միջոցով համապատասխան ծառայություններ մատուցելու, գովազդ տեղադրելու և օրենքով սահմանված այլ տեսակի գործունեություններ ծավալելու համար):

Նշված օրենքներով սահմանված տուրքի տեսակների կամ օբյեկտների թռուցիկ ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ տուրքի ծագման հիմքն իրավական առումով ոչ թե համապատասխան մարմինների կողմից իրականացվող գործողությունները կամ ծառայություններն են, այլ այդ մարմիններին օրենքով վերապահված իրավասությունն է: Օրինակ՝ դատարան ներկայացվող հայցադիմումի համար օրենքը [2] նախատեսում է պետական տուրքի վճարում: Իսկ ի՞նչ գործողություն կամ ծառայություն է իրականացնում պետական մարմինը, տվյալ դեպքում՝ դատարանը, որն առաջացնում է տուրքի վճարման կամ պարտադիր վճարի մուծման անհրաժեշտություն: Մի՞թե հայցադիմումի ընդունումը դատարանի քարտուղարի կողմից (ըստ էության դա է այն գործողությունը, որը կատարում է պետական մարմինը տվյալ դեպքում) կարող է դառնալ պետական տուրքի առաջացման հիմք: Անշուշտ, ո՛չ:

Սահմանադրությամբ [1] դատարաններին վերապահված գլխավոր իրավասությունն արդարադատություն իրականացնելն է, իսկ վերջինիս իրականացումը չի կարող սահմանափակվել լոկ հայցադիմումի ընդունման գործողությամբ: Ակնհայտ է, որ հայցադիմում ներկայացնելը լոկ միջոց է դատական իշխանությանն օրենքով վերապահված արդարադատություն իրականացնելու բացառիկ իրավասությունից օգտվելու համար: Ուստի պետական տուրքի ծագման իրավական հիմքն ակնհայտորեն դատական մարմնի գործողությունը չէ, այլ պետական այդ մարմնին օրենքով վերապահված բացառիկ իրավասությունից օգտվելու հանգամանքն է: Նույն դատողությունները, առանց սխալվելու հավանականության, կարելի է տարածել նաև վերը նշված օրենքով պետական տուրքի համար սահմանված մնացած օբյեկտների վրա:

Անդրադառնալով «տեղական տուրքի» հասկացությանը [5]՝ կարելի է փաստել, որ ՏԻ մարմիններին նշված օրենքով վերապահված «թույլտվություն տալը» ոչ թե կառավարչական ինչ-որ հերթական գործողություն է (կարգադրություն կամ որոշում ստորագրել է), այլ իրավասություն՝ այսինքն՝ իրավունք համայնքի վարչական սահմաններում տվյալ գործունեության իրականացումը թույլատրելու վերաբերյալ, ընդ որում՝ բացառիկ իրավունք, այսինքն՝ որևէ այլ մարմին տվյալ իրավասությամբ օժտված չէ:

Հարկ է նշել նաև, որ համապատասխան մարմնի կողմից գործողության իրականացումը կամ չիրականացումը կարող է առաջացնել վարչական պատասխանատվություն (այն էլ պաշտոնատար անձի համար), մինչդեռ իրավասության իրականացումը պարտադիր թղթակցվում է նրա հետևանքների քաղաքական պատասխանատվության հետ: Օրինակ՝ համայնքի ղեկավարի կողմից ավագանու քննարկմանը տեղական տուրքի

դրույքաչափի սահմանման առաջարկի ներկայացումը [3] ֆորմալ առումով գործողություն է, բայց գործողություն, որը պայմանավորված է բյուջետային քաղաքականության մշակման ոլորտում համայնքի ղեկավարին վերապահված բացառիկ իրավասությամբ և դրա իրականացման կամ չիրականացման հետևանքների համար համայնքի ղեկավարը կրում է քաղաքական պատասխանատվություն: Նույն ընկալմամբ համայնքի ղեկավարի կողմից որևէ իրավաբանական անձին շինարարության թույլտվություն տալու վերաբերյալ որոշում կայացնելը կամ այդ որոշման ստորագրումը ֆորմալ առումով գործողություն է, սակայն այդ գործողության իրականացումը պայմանավորված է բացառապես համայնքի ղեկավարին օրենքով վերապահված նշյալ իրավասությամբ և դրա կատարումը կամ չկատարումը համայնքի ղեկավարի համար կարող է ունենալ նաև քաղաքական հետևանքներ:

Հետևաբար պետական մարմնի կամ ՏԻ մարմնի գործողությունները պայմանավորված են բացառապես տվյալ մարմնի իրավասությամբ և բխում են վերջինից:

Տուրքի հայեցակարգային իմաստի մեկնաբանությանը կարող է օգնել այդ կատեգորիայի սահմանումն օտարերկրյա օրենսդրություններում:

Ռուսաստանի Դաշնության Հարկային օրենսգիրքը տալիս է պետական տուրքի հետևյալ սահմանումը. «Տուրքը գումարային գանձույթ է, որը գանձվում է իրավասու պաշտոնական մարմինների կողմից վերջիններին վերապահված որոշակի պարտականությունների (ֆունկցիաների) կատարման դիմաց՝ օրենսդրությամբ սահմանված չափերով» [8]: Հետագայում նույն Հարկային օրենսգրքում կատարվել է փոփոխություն, որով տրվել է պետական տուրքի ավելի ամբողջական սահմանում: Համաձայն ՌԴ Հարկային օրենսգրքի (25.3 «Պետական տուրք») պետական տուրքը գանձույթ է, որը գանձվում է կազմակերպություններից և ֆիզիկական անձանցից՝ ՌԴ օրենսդրական ակտերի, ՌԴ սուբյեկտների օրենսդրական ակտերի և տեղական ինքնակառավարման մարմինների (այսուհետև՝ ՏԻՄ) նորմատիվ իրավական ակտերի համաձայն՝ պետական մարմիններին, ՏԻՄ-երին, այլ մարմիններին և/կամ պաշտոնատար անձանց դիմելու դեպքում, որոնք իրավասու են դիմումատու անձանց հանդեպ իրականացնել ՌԴ Հարկային օրենսգրքով նախատեսված իրավաբանական առումով կարևորություն ներկայացնող գործողություններ (юридически значимые действия) [9]:

Բելառուսի Հանրապետության Հարկային օրենսգրքում այդ երկրի օրենսդիրը տուրքը սահմանում է տուրք վճարողների՝ պետության հանդեպ պարտավորության համատեքստում: Օրենսգրքի 283-րդ հոդվածը

տալիս է տուրք վճարողների սահմանումը՝ բանաձևելով տուրքը: Պետական տուրք վճարողներ են ճանաչվում այն կազմակերպություններն ու ֆիզիկական անձինք, ովքեր դիմում են իրավաբանական առումով կարևորություն ներկայացնող գործողությունների համար, ներառյալ որոշակի իրավունքների ձեռք բերելը կամ առանձին փաստաթղթեր ստանալը (այսուհետև տվյալ գլխում՝ իրավաբանական առումով կարևորություն ներկայացնող գործողություններ), հատուկ այդ իրավասություններով օժտված պետական մարմիններին, այլ իրավասու կազմակերպություններին, պաշտոնատար անձանց (այսուհետև տվյալ գլխում՝ պետական տուրք գանձող մարմիններ) [10]:

Տուրքի նույնաբովանդակ սահմանում է տրված նաև Ղազախստանի Հանրապետության Հարկային օրենսգրքում (հոդված 607): Պետական տուրքը պետական բյուջե մուտքագրվող գանձույթն է, որը գանձվում է իրավաբանական առումով կարևորություն ներկայացնող գործողությունների համար, այդ թվում կապված փաստաթղթերի տրամադրման հետ (պատճենների, կրկնօրինակների), իրավասու պետական մարմինների կամ պաշտոնատար անձանց կողմից [11]: Դժվար չէ նկատել, որ վերը ներկայացված սահմանումներում պետական տուրքը ներկայացվում է որպես գանձույթ, որը գանձվում է իրավաբանական և ֆիզիկական անձանցից պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված «իրավական առումով կարևորություն ներկայացնող գործողություններից» օգտվելու դիմաց: Այսինքն՝ այդ գործողությունների իրավական առումով կարևորությունը կայանում է նրանում, որ այդ գործողությունների կատարման իրավասությամբ օժտված են միայն այդ մարմինները: Այլ կերպ ասած՝ խոսքը գնում է համապատասխան մարմիններին վերապահված բացառիկ իրավասություններից օգտվելու դիմաց գանձույթի մասին:

Ուստի ամփոփելով վերը շարադրվածը՝ կարելի է տալ տուրքի հետևյալ սահմանումը՝ **տուրքը պետական մարմիններին և/կամ ՏԻՄ-երին օրենքով վերապահված բացառիկ իրավասություններից օգտվելու դիմաց գանձույթն է:**

Տուրքի վճարման անհրաժեշտությունն առաջանում է, երբ իրավաբանական կամ ֆիզիկական անձն օգտվում է պետական կամ ՏԻՄ-ին վերապահված այն իրավասությունից, որն օրենքով վերապահված է բացառապես միայն այդ մարմնին և այդ իրավասությունից օգտվելը պայմանավորված չէ վերջինիս հանրային համատարած անհրաժեշտությամբ:

Վերջին հանգամանքը՝ այն է իրավասության հանրային համատարած անհրաժեշտություն չներկայացնելը, էական նշանակություն ունի և ենթադրում է տուրքի առաջացում բացառապես այն դեպքում, երբ ծագում

է տվյալ իրավասությունից օգտվելու անհրաժեշտությունը (դրանում է տուրքի տարբերությունը հարկից): Օրինակ՝ պետության անունից առևտրային գործարքների, գույքի նկատմամբ սեփականության կամ այլ իրավունքների օրինականության ճանաչման իրավասությունը վերապահված է բացառապես նոտարին և այդ իրավասությունից իրավաբանական կամ ֆիզիկական անձինք օգտվում են միայն անհրաժեշտությունն առաջանալու դեպքում: Ուստի երբ որևէ ֆիզիկական կամ իրավաբանական անձ օգտվում է նոտարի այդ բացառիկ իրավասությունից, ապա միայն այդ դեպքում է առաջանում պետական տուրք վճարելու անհրաժեշտությունը:

Կամ՝ քաղաքացիական կացության գրանցման իրավասությունը վերապահված է բացառապես ՋԱԳՍ-ին (որևէ այլ կառույց այդ իրավասությամբ օժտված չէ), ուստի բոլոր այն դեպքերում, երբ քաղաքացիների մոտ առաջանում է այդ իրավասությունից օգտվելու անհրաժեշտություն և նրանք դիմում են պետական այդ մարմնին նրա իրավասությունից օգտվելու համար՝ առաջանում է նաև պետական տուրք վճարելու անհրաժեշտություն:

Մեկ այլ օրինակ ևս: Տրանսպորտային ծառայություններ մատուցելու թույլտվություն (լիցենզիա) տալու բացառիկ իրավասությունը վերապահված է համապատասխան նախարարությանը և ուրիշ որևէ պետական մարմին իրավասու չէ տրանսպորտային ծառայությունների լիցենզիա տրամադրել: Իրավաբանական կամ ֆիզիկական անձինք համապատասխան նախարարության իրավասությունից օգտվելու համար դիմում են միայն լիցենզիա ունենալու անհրաժեշտության դեպքում և յուրաքանչյուր նման դեպքում առաջանում է պետական տուրք մուծելու անհրաժեշտություն:

Օրենքով [5] բացառապես ՏԻՄ-երին է վերապահված համայնքի վարչական սահմաններում շինարարության թույլտվություն տալու իրավասությունը, ուստի բոլոր նրանք, ովքեր ցանկանում են իրականացնել շինարարություն, պետք է ստանան ՏԻ մարմնի թույլտվությունը, ուստի և պետք է վճարեն տեղական տուրք: Նույնը վերաբերում է ծխախոտ և ալկոհոլ, տեխնիկական հեղուկներ վաճառելու, գազալցակայան կամ հեղուկ վառելիքի լցակայանների միջոցով համապատասխան ծառայություն մատուցելու համար թույլտվության ստանալուն:

Դժվար չէ նկատել, որ նկարագրված դեպքերում պատկան մարմինների իրավասությունն իրենից հանրային համատարած պարտադիր անհրաժեշտություն չի ներկայացնում և դրանից շահառուներից յուրաքանչյուրն օգտվում է միայն իր համար այդ անհրաժեշտությունն առաջանալու դեպքում:

Տուրքի թերևս ամենակարևոր առանձնահատկությունն այն է, որ այն վճարվում է պետական իշխանության մարմիններին կամ ՏԻ մարմիններին վերապահված բացառիկ իրավասույունից օգտվելու ամեն մի կոնկրետ դեպքի համար:

Ըստ տնտեսագիտական այս կատեգորիայի սահմանման՝ տուրքը պետք է լինի մեկանգամյա գանձույթ: Եվ իրոք, եթե տուրքի օբյեկտը, օրինակ, գազալցակայանի միջոցով ծառայություն մատուցելու համար թույլտվություն ստանալն է, ապա այդ թույլտվությունը ՏԻ մարմնի կողմից կարող է տրվել միայն այն դեպքում, երբ դիմումատու ձեռնարկատերն ստանձնում է այդ կարգի օբյեկտների շահագործմանը օրենսդրությամբ ներկայացվող տեխնիկական-անվտանգային և այլ անհրաժեշտ պահանջների ապահովման պարտավորությունը, թույլտվությունը պետք է տրվի մեկ անգամ և ուժի մեջ մնա այնքան ժամանակ, քանի դեռ չեն առաջացել նոր հանգամանքներ (օրինակ՝ անվտանգային կամ էկոլոգիական բնույթի), որոնք առաջացնում են տվյալ գործունեությունը ծավալելու համար նոր պահանջներ, ուստի և նոր թույլտվություն տալու անհրաժեշտություն: Նույնը կարել է պնդել նաև ակոհոլային խմիչքներ և ծխախոտ, տեխնիկական հեղուկներ և այլ նմանատիպ գործունեություն ծավալելու համար թույլտվություն տալու պարագայում: Այսինքն՝ շահառուի մոտ նույն գործունեության համար նոր տուրք վճարելու անհրաժեշտությունը կարող է ծագել բացառապես տվյալ գործունեության իրականացման համար օրենսդրությամբ նոր պահանջներ ձևավորելու հետևանքով նոր թույլտվություն ստանալու դեպքում (այնպիսի նոր պահանջներ, առանց որոնց ապահովման այլևս հնարավոր չէ կամ նպատակահարմար չէ իրականացնել տվյալ գործունեությունը):

Մինչդեռ «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքում [5] տեղական տուրքի որոշ տեսակների համար ներմուծված է «օրացույցային տարվա համար տուրքի դրույքաչափ» հասկացությունը, ինչը ոչ միայն հիմք է ստեղծում ՏԻ մարմիններին թույլտվությունները տալ մեկ տարով և ստիպել շահառուներին յուրաքանչյուր տարի դիմել ՏԻ մարմնին միևնույն թույլտվությունը ստանալու համար և վճարել տեղական տուրք, այլև տուրքը փաստացի դարձնում է հարկ՝ կոնկրետ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու համար կայուն պարբերականությամբ պարտադիր վճարման ենթակա գանձույթ: Օրինակ նման կարգավորում օրենքը նախատեսում է ծխախոտ և ակոհոլային խմիչքներ վաճառելու թույլտվություն տալու համար: Բնական հարց է առաջանում՝ յուրաքանչյուր օրացույցային տարում այդ ի՞նչ նոր պահանջներ են առաջանում տվյալ գործունեությունն իրականացնելու համար, որը կարող է հանգեցնել նոր

թույլտվություն ստանալու, հետևաբար և նոր տուրք վճարելու անհրաժեշտությանը: Ակնհայտ է, որ՝ ոչ մի:

Ֆիզիկական անձանց տաքսի ծառայության լիցենզիա տալու համար օրենքով [7] սահմանված է պետական տուրքի եռամսյակային դրույքաչափ (նախկինում գործում էր նաև տուրքի ամենամսյա դրույքաչափ), ընդ որում՝ տաքսիստներն ազատվում են մասնավոր ձեռնարկատիրությամբ զբաղվելու համար հարկեր վճարելու պարտավորությունից:

Սրանք օրենքի ուժով տուրքի դասական հասկացության աղավաղման և տուրքը՝ որպես հարկ կիրառելու արատավոր պրակտիկայի տիպիկ օրինակներ են: Եվ իրոք, նման կարգավորումների պարագայում տուրքերը գործարարների համար փաստացի վերածվում են նոր հարկատեսակի, ինչը հակասում է թե՛ «տուրք» և թե՛ «հարկ» հասկացություններին:

Ավելին, տուրքը պետական մարմիններին մասնավոր ձեռնարկատիրությանը միջամտելու «լավագույն» գործիքն է (տվյալ գործունեությունը ծավալելու համար թույլտվություն տալու կամ չտալու առումով) և պարունակում է նաև լուրջ կոռուպցիոն ռիսկեր: Պատահական չէ, որ միջազգային հեղինակավոր կառույցները տնտեսական ազատության առումով երկրների վարկանիշները սահմանելիս առանձնահատուկ կարևորում են պետության թույլտվությունը պահանջող գործարարության տեսակների քանակը, ընդ որում որքան շատ են թույլտվություն պահանջող գործունեության տեսակները, այնքան նվազ է երկրի տնտեսական ազատությունների մակարդակը: Այս ցուցանիշը լուրջ ազդակ է հատկապես արտաքին ներդրողների համար:

Մեզանում պետական թույլտվություն պահանջող գործունեության տեսակների քանակն արհեստականորեն նվազեցնելու նպատակով 2015 թ. «Գործունեության իրականացման ծանուցման մասին» ՀՀ օրենքով [6] ներմուծվեց գործունեության որոշ տեսակների համար ծանուցմամբ թույլտվություն տալու հասկացությունը: Այսինքն՝ գործունեության որոշ տեսակների համար պետական կամ ՏԻՄ-երի կողմից թույլտվություն տալու (լիցենզիա) նախկինում գործող ինստիտուտը փոխարինվեց ծանուցմամբ թույլտվություն տալով, որի համար օրենքն ընկերությունների համար սահմանել է բավականին լուրջ դրույքաչափերով պետական (տեղական) տուրք: Ընդ որում՝ թեպետ նշված օրենքն ամրագրում է կարգավորման այդ համակարգի ներդրման նպատակները՝ շուկայի կայացմանը նպաստելը, սպառողների իրավունքների պաշտպանությունը և այլն, այդուհանդերձ օրենքում որևէ դրույթ նշված նպատակների իրականացման առումով գոյություն չունի: Ավելին, ամբողջ օրենքը փաստացի գործունեության այդ տեսակներն իրականացնող իրավաբանական և ֆիզիկական անձանց հաշվառման մասին է:

Այս օրինակը մեր օրինաստեղծ պրակտիկայում պետական մարմինների կողմից տուրքի հասկացության ոչ հայեցակարգային, կամայական և աղավաղված ընկալումների հերթական վկայությունն է, որը որևէ աղերս չունի շուկայում տնտեսական գործունեության աշխուժացմանը նպաստելու պետության պարտավորությունների հետ:

Առանձնահատուկ մեկնաբանություն է պահանջում տուրքի դրույքաչափի մեծության սահմանման խնդիրը: Տուրքի սահմանումից հետևում է, որ նրա դրույքաչափը որևէ կերպ չի կարող պայմանավորված լինել տվյալ իրավասության օգտագործման առարկա հանդիսացող օբյեկտի առանձնահատկություններով: Մեծ հաշվով, ինչ նշանակություն ունի թե շինարարության թույլտվությունը ՏԻ մարմնի կողմից տրվում է բազմաբնակարան շենքի, առանձնատան թե ավտոտնակի կառուցման համար: Բոլոր դեպքերում օգտագործվում է ՏԻ մարմնի նույն բացառիկ իրավասությունը: Կամ արդյոք էական է, թե նոտարն ի՞նչ իրավական փաստաթուղթ է վավերացնում՝ առևտրային գործա՞րք, թե՞ ժառանգության իրավունքը կամ սեփականության իրավունքը հավաստող փաստաթուղթ՝ բոլոր դեպքերում նոտարը գործում է օրենքով իրեն վերապահված միևնույն բացառիկ իրավասությամբ:

Մինչդեռ օրենքը [4], [5] սահմանում է տուրքի յուրաքանչյուր տեսակի համար առանձին դրույքաչափ, ընդ որում՝ տեղական տուրքերի պարագայում օրենքը [5] սահմանում է տուրքի դրույքաչափի նվազագույն և առավելագույն չափը՝ տուրքի կոնկրետ դրույքաչափի սահմանման իրավասությունը վերապահելով տեղական իշխանություններին:

Այսինքն՝ օրենքը սահմանում է պետական և տեղական տուրքերի տարբեր դրույքաչափեր՝ նույնիսկ միևնույն իրավասությունից օգտվելու պարագայում և իրավաչափ է, քանի որ օրենսդիրն առաջնորդվում է պետական կամ ՏԻ մարմնին վերապահված կոնկրետ իրավասության հանրային կարևորությամբ:

Միջազգային պրակտիկայում պետական տուրքի դրույքաչափերը հաճախ սահմանվում են՝ ելնելով պետության այս կամ այն իրավասության հանրային առանձնահատկությունից: Օրինակ՝ եվրոպական մի շարք երկրներում (Ֆրանսիա, Բելգիա) դատական հայցեր ներկայացնելու համար սահմանված են տուրքի շատ ցածր դրույքաչափեր (իսկ 2015 թ. հետո առանձին դեպքերում նույնիսկ տուրք չի սահմանված), որպեսզի հնարավորություն ստեղծվի արդարադատությունը դարձնել մատչելի հանրության ցանկացած ներկայացուցչի համար: Փոխարենը Գերմանիայի

օրենսդրությունը դատական հայցի տուրքի դրույքաչափը կապում է հայցի առարկայի գումարի մեծության հետ՝ որքան մեծ է հայցի գումարային պահանջը՝ այնքան մեծ է տուրքի դրույքաչափը, քանի որ իշխանությունները տուրքը դիտարկում են նաև դատական ծախսերը փոխհատուցելու միջոց: Համանման փոփոխություններ կատարվեցին նաև բրիտանական օրենսդրությունում՝ 2015 թ. հետո դատական հայցի տուրքի դրույքաչափերն ավելացան 600 %-1000 %: Այս փոփոխությունը բրիտանական հանրության կողմից ստացել է «ընտրյալների արդարադատություն» անունը: Ընդ որում՝ հաճախ տուրքի դրույքաչափը հասնում է վիճարկվող գումարի 80 %-ը [12]:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ կարելի է տալ տուրքի հետևյալ սահմանումը՝ **տուրքը պետական մարմիններին և/կամ ՏԻՄ-երին օրենքով վերապահված բացառիկ իրավասություններից օգտվելու դիմաց մեկանգամյա գանձույթ է, որի դրույքաչափը սահմանվում է օրենքով՝ կոնկրետ իրավասության հանրային կարևորությունից ելնելով:**

Վճարը ծառայություններից օգտվելու դիմաց սպառողի մուծանքն է: Այսինքն վճարի մուծման անհրաժեշտությունը ծագում է տվյալ ծառայությունից օգտվելու հետևանքով: Տեղական վճարները տարբեր են և դրանք պայմանավորված են ՏԻՄ-երի կողմից մատուցվող համայնքային ծառայություններից օգտվելու հանգամանքով [5]: Օրինակ՝ աղբահեռացման համար համայնքի բնակիչները մուծում են աղբահանության վճար, համայնքի մանկապարտեզից գտվելու համար բնակիչը մուծում է համապատասխան վճար, ջրամատակարարման ծառայությունից օգտվելու համար սպառողները մուծում են ջրամատակարարման վճար (ջրի վարձ) և այլն: Սպառողը վճար է մուծում նաև ՏԻ մարմնից տեղեկանք, արխիվային փաստաթղթերի պատճեններ, ճարտարապետաշինարարական առաջադրանք, շինարարության տեղանքի ստորգետնյա կոմունիկացիաների հանույթ կամ միացման տեխպայմաններ ստանալու և տեղական իշխանությունների այլ ծառայություններից օգտվելու համար: Օրենքը [5] սահմանում է տեղական վճարների թվով 21 տեսակ:

Վճարի չափն ուղղակիորեն պայմանավորված է մատուցվող (սպառվող) ծառայության ծավալով և որակով: Որքան մեծ է ծառայության սպառման ծավալը՝ այնքան մեծ է մուծվող վճարի չափը: Եվ իրոք, սպառողը շատ ջուր է սպառում՝ շատ է վճարում, քիչ է սպառում՝ քիչ է վճարում: Բազմաբնակարան շենքի տեղանքի ստորգետնյա կոմունիկացիաների հանույթն ավելի

աշխատատար է քան ավտոտնակի կառուցման համար անհրաժեշտ նույնաբովանդակ փաստաթուղթը, ուստի առաջին դեպքում սպառողն ավելի մեծ չափի վճար կմուծի ՏԻ մարմնին, քան երկրորդ դեպքում: Այսինքն՝ վճարի չափը պայմանավորված է մատուցվող ծառայության ծավալով:

Միաժամանակ ծառայության դիմաց մուծվող վճարի չափը պետք է լինի այնքան, որ փոխհատուցի ծառայության ծախսերը և երաշխավորի որոշակի շահույթ՝ ծառայություն մատուցող ընկերության կարողությունների վերարտադրման և ընդլայնման համար:

Ակնհայտ է, որ վճարի վերը շարադրված հասկացության պարագայում բոլորովին անտրամաբանական է դառնում գործող օրենքներով պետական կամ տեղական տուրքի սահմանումը (տուրքը որպես պետական կամ տեղական մարմինների կողմից մատուցվող ծառայության դիմաց գանձույթ): Առավել քան ակնհայտ է, որ տուրքը որևէ պարագայում չի կարող լինել ծառայության դիմաց գանձույթ: Ծառայության համար, վերջինիցս օգտվողները՝ սպառողները, մուծում են վճար, որի մեծությունը կախված է սպառվող ծառայության ծավալից և պետք է ապահովի ծառայության ծախսերի ողջամիտ փոխհատուցում:

Իրականում քիչ չեն դեպքերը, երբ միևնույն մարմինն օրենքով իրեն վերապահված բացառիկ իրավասությունն իրականացնելու նպատակով պարտավոր է նաև համապատասխան ծառայությունը մատուցել: Օրինակ՝ նոտարը մինչև առք ու վաճառքի պայմանագրի վավերացումը պարտավոր է ուսումնասիրել պայմանագրի պայմանները, դրանց համապատասխանությունն օրենքներին, կողմերի ռիսկերի հավասարակշռվածությունը և այլն: Նկարագրվածն իր բնույթով ծառայություն է և բխում է տվյալ գործարքի մասնակիցների շահերից: Ընդ որում՝ նոտարի կողմից մատուցվող ծառայության ծավալը տարբեր է կախված նոտարական վավերացման ներկայացված գործի բնույթից՝ ժառանգության իրավունքի, առք ու վաճառքի գործարքի, սեփականության իրավունքի թե մեկ այլ իրավունքի կամ գործարքի վավերացում: Հետևաբար որպես կանոն նոտարին ֆիզիկական կամ իրավաբանական անձը մուծում է վճար՝ նոտարի ծառայությունից օգտվելու համար և պետական տուրք՝ գործարքը վավերացնելու համար: Նույն խնդիրն է առաջանում նաև, օրինակ, պետական համապատասխան մարմնի կողմից մտավոր սեփականության իրավունքի, ապրանքային նշանների նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման պարագայում: Պետության կողմից ֆիզիկական և իրավաբանական անձանց նշված իրավունքները ճանաչելու համար նախ իրականացվում է

լուրջ ծավալի ուսումնասիրություն գրանցման ենթակա օբյեկտի օրենքով պահանջվող բնութագրերի ուղղությամբ: Այս օրինակներն ավելի ակնհայտ են դարձնում տուրք և վճար կատեգորիաների տնտեսագիտական բովանդակության տարբերությունն ու առանձնահատկությունները:

Գործնականում կայուն պարբերականությամբ մատուցվող ծառայությունների համար սահմանվում է **միավոր ծառայության դիմաց վճար՝ սակագին**: Օրինակ՝ մեկ խոր.մ ջուր մատակարարելու ծառայության դիմաց վճարը (ջրի սակագին), մեկ կվտ/ժամ հոսանքի մատակարարման դիմաց վճարը (հոսանքի սակագին), մանկապարտեզից օգտվելու դիմաց մեկ երեխայի համար սահմանվող վճարի գինը, աղբահանության համար մեկ շնչի կտրվածքով սահմանված վճարի չափը և այլն:

Տեղական վճարները մուտքագրվում են վարչական բյուջե [3], եթե ծառայության մատուցումը, հետևաբար վճարների հավաքումն իրականացնում է ՏԻ մարմինը (նրա ենթակայության ներքո գործող և ՏԻ մարմնի կողմից հիմնած առևտրային կազմակերպությունը): Եթե համայնքային ծառայությունը կազմակերպվում է մասնավոր առևտրային ընկերության միջոցով, ապա տվյալ ծառայության դիմաց տեղական վճարներն ուղղակիորեն մուտքագրվում են վարչական բյուջե, եթե վճարների հավաքագրման պատասխանատվությունն ստանձնել է ՏԻ մարմինը: Նման դեպքերում ծառայություն մատուցող առևտրային ընկերության ծասերը (վճարի չափի հաշվարկման համար ընդունված ծախսերը՝ ներառյալ հարկերն ու տնօրինման ենթակա շահույթը) փոխհատուցվում են ՏԻ մարմնի կողմից՝ վարչական բյուջեի ծախսային մասից:

Այն դեպքերում, երբ վճարների հավաքման պարտավորությունը վերապահված է ծառայություն մատուցող ընկերությանը, ապա տեղական վճարները վարչական բյուջեում հավաքվում են եկամուտների և ծախսերի հաշվանցման սկզբունքով (մուտք և նույն չափով ծախս ամրագրելով):

Ամփոփելով վերլուծությունը՝ առանց սխալվելու հավանականության, կարող ենք արձանագրել, որ տուրքը և վճարը, որպես պետության և տեղական իշխանության տնտեսական քաղաքականության արդյունավետության ապահովման յուրահատուկ գործիքներ, հրամայաբար պահանջում են օրենքով՝ այդ տնտեսագիտական կատեգորիաների հայեցակարգով պայմանավորված՝ հասկացությունների հստակ սահմանում և բացառապես դրանց հիման վրա այդ գործիքների իրավական կիրառում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, Ընդունված է 06.12.2015:
2. Բյուջետային համակարգի մասին ՀՀ օրենք, ՀՕ- 137, Ընդունված է 24.06.1997:
3. Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենք, ՀՕ-337, Ընդունված է 07.05.2002:
4. Պետական տուրքի մասին ՀՀ օրենք, ՀՕ-186, Ընդունված է: 27.12.1997:
5. Տեղական տուրքերի և վճարների մասին ՀՀ օրենք ՀՕ-185, Ընդունված է: 26.12.1997:
6. Գործունեության իրականացման ծանուցման մասին ՀՀ օրենք ՀՕ - 120-Ն Ընդունված է 13.11.2015:
7. Պետական տուրքի մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կտարելու մասին ՀՀ օրենք, ՀՕ-171-Ն, Ընդունված է 20.11.2014:
8. «Налоговый кодекс Российской Федерации», принят 1 июля 1998 года N 146-ФЗ.
9. «Налоговый кодекс Российской Федерации» (часть вторая), принят 05.08.2000 N 117-ФЗ (ред. от 02.07.2021) (с изм. и доп., вступ. в силу с 01.10.2021).
10. «Налоговый кодекс Республики Беларусь» (Особенная часть), принят 29 декабря 2009г. № 71-3.
11. «Налоговый кодекс Республики Казахстан», принят 25 декабря 2017 г № 120-V.
12. **М.К. Сулейменов**, Директор НИИ частного права Каспийского университета, д.ю.н., профессор, академик НАН РК, «Государственная пошлина и доступность правосудия: взаимосвязь и взаимовлияние», https://online.zakon.kz/Document/?doc_id=31856383.

О НЕКОТОРЫХ ОСОБЕННОСТЯХ ЭКОНОМИЧЕСКИХ КАТЕГОРИЙ ПОШЛИНА И ПЛАТА: НА ПРИМЕРЕ АДМИНИСТРАТИВНЫХ БЮДЖЕТОВ ОБЩИН

ХОСРОВ АРУТЮНЯН

Академия государственного управления Республики Армения

В статье автор, рассматривая вопрос включения в состав не налоговых доходов местного бюджета пошлин и плат, обращается к концептуальному содержанию этих экономических категорий и в свете этих рассуждений проводит анализ определений и некоторых норм действующих законов РА «О государственной пошлине» и «О местной пошлинах и платах», показывая их противоречие с экономическим содержанием этих категорий.

Автор свои комментарии к концепциям указанных категорий обосновывает на конкретных примерах из сфер отнесенных компетенциям государственных и местных органов власти. В статье, в своих аналитических рассуждениях, автор раскрывает особенности пошлины и платы, как своеобразных инструментов обеспечения целенаправленной экономической политики проводимой государственными и местными органами власти. В этом контексте затронуты также некоторые проблемы разработки местных бюджетов и эффективности финансовых и экономических возможностей общин.

Статья предусмотрена для магистрантов Академии Управления изучающих проблемы территориального управления и местного самоуправления.

Ключевые слова: пошлина, плата, органы МСУ, власть, компетенция, бюджет, доходы.

**ON SOME SPECIFIC CONCEPTUAL FEATURES OF ECONOMIC
CATEGORIES OF “DUTIES AND PAYMENTS” BY THE EXAMPLE OF
COMMUNITY ADMINISTRATIVE BUDGET**

KHOSROV HARUTYUNYAN

Public Administration Academy of the Republic of Armenia

The article, while referring to the issue of including duties and payments as non-tax revenues in the income section of local budgets, defines the conceptual content of these economic categories.

It also reviews the definitions and some provisions fixed in the Law of the Republic of Armenia on State Duty and the Law of the Republic of Armenia on Local Duties and Payments and reveals their contradiction with the economic content of the categories of duties and payments. The conceptual commentaries are substantiated by concrete examples from the areas of competencies of both state and local governing bodies.

The analysis in the article further reveals the specific features of duties and payments as unique tools for ensuring the implementation of the economic policy goals of state and local governing bodies. In this context, the article touches upon some issues of formulation of local budgets as well as the effectiveness of financial and economic capacities of communities.

Keywords: duty, payment, local self-government bodies, authority, competence, budget, revenues.

*Ներկայացվել է խմբագրություն 15.10.2021
Երաշխավորվել է տպագրության 27.10.2021*